



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄԼՁՈՐՄԵՐՈՐԴ ՏԱՐԻ 14(354) «06» օգոստոսի 2018թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
231	«Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի N 370-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 625-Ն որոշումը.....	3
232	«Պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասեր ունեցող բաժնետիրական ընկերությունների 2017 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված գուտ շահույթից պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերի և Արցախի Հանրապետության ոստիկանության պետական պահպանության վարչության կողմից 2017 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված գուտ շահույթից պետական բյուջե վճարման ենթակա գումարի մասին» ԱՀ կառավարության N 627-Ն որոշումը.....	6
233	«Արցախի Հանրապետության երիտասարդության հարցերով միջգերատեսչական խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմն ու կանոնակարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 23-ի N 602-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 642-Ն որոշումը.....	8
234	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի N 63 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 643-Ն որոշումը.....	13
235	«Մանդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի անասնաբուժության տեսչության, սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի բուսասանիտարիայի տեսչության և սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի սննդամթերքի անվտանգության, որակի և օպերատիվ հսկողության տեսչության կանոնադրությունները հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 644-Ն որոշումը.....	15
236	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի	

	փետրվարի 21-ի N 112-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 646-Ն որոշումը.....	30
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ	
237	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի 2010 թվականի հունիսի 22-ի թիվ 02-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ դատավորների ընդհանուր ժողովի N 3-Ն որոշումը.....	31

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 օգոստոսի 2018թ.

N 625-Ն

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 370-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՏՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Համամասնությունների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՌՄԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
10			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	-	-	(421597,0)	(421597,0)
	2		Ծերություն	-	-	(340000,0)	(340000,0)
		1	Ծերություն	-	-	(340000,0)	(340000,0)
		01	Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ	-	-	(45000,0)	(45000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	-	(45000,0)	(45000,0)
		04	Օրենքով և ԱՀ Նախագահի հրամանագրով սահմանված կենսաթոշակներ և դրամական պարգևատրումներ	-	-	(45000,0)	(45000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	-	(45000,0)	(45000,0)
		06	Աշխատանքային կենսաթոշակներ	-	-	(250000,0)	(250000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	-	(250000,0)	(250000,0)
	4		Ընտանիքի անդամներ և զավակներ	-	-	(81597,0)	(81597,0)
		1	Ընտանիքի անդամներ և զավակներ	-	-	(81597,0)	(81597,0)
		03	Պետական նպաստներ	-	-	(46597,0)	(46597,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	-	(46597,0)	(46597,0)
		13	Ամուսնության միանվագ նպաստների տրամադրում	-	-	(35000,0)	(35000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	-	(35000,0)	(35000,0)

11			Հիմնական բաժիններին չդասվող ծախսեր	-	-	421597.0	421597.0
	1		Պետական բյուջեի և համայնք- ների պահուստային ֆոնդեր	-	-	421597.0	421597.0
		1	Պետական բյուջեի պահուստա- յին ֆոնդ	-	-	421597.0	421597.0
		01	Պետական բյուջեի պահուստա- յին ֆոնդ	-	-	421597.0	421597.0
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	-	421597.0	421597.0

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 օգոստոսի 2018թ.

N 627-Ն

ք.Ստեփանակերտ

**ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԵՐ ՈՒՆԵՑՈՂ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ
ՍՏՑՎԱԾ ՁՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017
ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ
ՍՏՑՎԱԾ ՁՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 28-ի N 165 որոշման 2-րդ կետը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է**.

1. Հաստատել պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասեր ունեցող բաժնետիրական ընկերությունների 2017 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթից պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասերի դիմաց Արցախի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Արցախի Հանրապետության ոստիկանության պետական պահպանության վարչությունը 2017 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթից պետական բյուջե է վճարում 5 864 500 (հինգ միլիոն ութ հարյուր վաթսուհյուրս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

3. Հանձնարարել բաժնետիրական ընկերություններում պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասերի կառավարման լիազորություններն իրականացնող մարմինների ղեկավարներին՝

1) ապահովել Արցախի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների օրենսդրությամբ սահմանված կարգով վճարումը Արցախի Հանրապետության պետական բյուջե:

2) պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասերի դիմաց բաժնետիրական ընկերությունների տրամադրության տակ թողնված զուտ շահույթի ոչ պակաս, քան 90 տոկոսն ուղղել ներդրումների իրականացմանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԵՐ
ՈՒՆԵՑՈՂ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՍՏՅՎԱԾ
ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻՑ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ
ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ**

Հ/Հ	Ընկերությունների անվանումները	ԱՀ պետական բյուջե շահութաբաժինների վճարման չափերը (հազար ՀՀ դրամ)
1.	«Արևիկ» մանկական բուժմիավորում փակ բաժնետիրական ընկերություն	10 569,6
2.	«Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն	1 957,1
3.	«Ուռուցքաբանական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերություն	11 867,8
4.	«Մաշկավեներոլոգիական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերություն	1 270,1
5.	«Հոգեթմրաբանական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերություն	2 673,5
6.	ԼՂՀ առողջապահության նախարարության «Հաղորթի շրջանային բուժմիավորում» փակ բաժնետիրական ընկերություն	3 968,8
7.	«ԼՂՀ առողջապահության նախարարության Ռ.Հ. Բազիյանի անվան Մարտակերտի շրջանային բուժմիավորում» փակ բաժնետիրական ընկերություն	7 677,9
8.	ԼՂՀ առողջապահության նախարարության «Մարտունու շրջանային բուժմիավորում» փակ բաժնետիրական ընկերություն	7 430,9
9.	ԼՂՀ առողջապահության նախարարության «Շուշիի շրջանային բուժմիավորում» փակ բաժնետիրական ընկերություն	1 463,8
10.	«Մերմնաբուժության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն	3 030,5
11.	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Հանրային հեռուստա-ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերություն	546,6
12.	«Մասնագիտացված մոնտաժային շահագործման տեղամաս» փակ բաժնետիրական ընկերություն	242,5
13.	«Վահե Կարապետյան ճանշահագործում» փակ բաժնետիրական ընկերություն	1 472,3
14.	«Քաշաթաղի ջրամատակարարում» փակ բաժնետիրական ընկերություն	9 403,8
15.	«Սակերանի Բերդ» փակ բաժնետիրական ընկերություն	1 015,3
Ը Ն Դ Ն Ա Ն ՈՒ Ր Ը		64 590,5

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 օգոստոսի 2018թ.

N 642-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻԶԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի N 602-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ և 73-րդ հոդվածները, Արցախի Հանրապետության պետական երիտասարդական քաղաքականության մշակմանն ու իրականացմանն աջակցելու նպատակով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո շ ու մ է**.

1. Ստեղծել Արցախի Հանրապետության երիտասարդության հարցերով միջգերատեսչական խորհուրդ:

2. Հաստատել՝

1) Արցախի Հանրապետության երիտասարդության հարցերով միջգերատեսչական խորհրդի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Արցախի Հանրապետության երիտասարդության հարցերով միջգերատեսչական խորհրդի կանոնակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 23-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երիտասարդության հարցերով միջգերատեսչական խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմն ու կանոնակարգը հաստատելու մասին» N 602-Ն որոշումը:

4. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱԶՄ

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

1. Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարար-խորհրդի նախագահ
2. Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարի տեղակալ-խորհրդի նախագահի տեղակալ
3. Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության աշխատակազմի երիտասարդության հարցերի բաժնի պետ-խորհրդի քարտուղար
4. Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի պետ-խորհրդի անդամ
5. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ-խորհրդի անդամ
6. Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ-խորհրդի անդամ
7. Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարի տեղակալ-խորհրդի անդամ
8. Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի առաջին տեղակալ-խորհրդի անդամ
9. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ-խորհրդի անդամ
10. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի տեղակալ-խորհրդի անդամ
11. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի տեղակալ-խորհրդի անդամ
12. Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ-խորհրդի անդամ
13. Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարի տեղակալ-խորհրդի անդամ
14. Արցախի Հանրապետության ռստիկանության պետի տեղակալ-խորհրդի անդամ
15. Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի սոցիալ-ժողովրդագրության և աշխատանքի շուկայի վիճակագրության բաժնի պետ-խորհրդի անդամ
16. Ստեփանակերտի քաղաքապետի տեղակալ-խորհրդի անդամ
17. Շուշիի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ- խորհրդի անդամ
18. Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ- խորհրդի անդամ
19. Հադրութի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ- խորհրդի անդամ
20. Մարտակերտի շրջանի վարչակազմի աշխատակազմի ղեկավար - խորհրդի անդամ
21. Մարտունու շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ- խորհրդի անդամ
22. Քաշաթաղի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ- խորհրդի անդամ
23. Շահումյանի շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ- խորհրդի անդամ:

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻԶՉԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Արցախի Հանրապետության պետական երիտասարդական քաղաքականության միջգերատեսչական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) գործունեությունը:

Խորհուրդը՝ փորձագիտական, խորհրդատվական, խորհրդակցական մարմին է, որն ապահովում է միջգերատեսչական համագործակցություն՝ Արցախի Հանրապետությունում պետական երիտասարդական քաղաքականության իրագործման առումով:

2. Խորհրդի գործունեությունն իրականացվում է հասարակական հիմունքներով:

3. Խորհրդի գործունեությունն իրականացվում է Արցախի Հանրապետության Սահմանադրության, օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև սույն կանոնակարգին համապատասխան:

II. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ
ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Խորհրդի գործունեության նպատակն է՝ աջակցել Արցախի Հանրապետության պետական երիտասարդական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը, խթանել հանրային կյանքի տարբեր բնագավառներում երիտասարդների մասնակցությունը, և նպաստել երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը:

5. Խորհրդի հիմնական խնդիրներն են՝

1) Արցախի Հանրապետության պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարության մշակումը:

2) Արցախի Հանրապետության պետական երիտասարդական քաղաքականության հարցերով Արցախի Հանրապետության գործադիր իշխանության մարմինների գործունեության համակարգումը:

3) Արցախի Հանրապետության պետական երիտասարդական քաղաքականության իրականացման ընթացքի վերլուծությունը, այն կատարելագործելու նպատակով առաջարկությունների մշակումը և ներկայացումը:

4) պետական երիտասարդական քաղաքականության իրականացման գործընթացում Արցախի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, երիտասարդական կառույցների, այլ շահագրգիռ կազմակերպությունների փոխգործակցության համակարգումը:

III. ԽՈՐՀՐԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Խորհուրդն իրականացնում է հետևյալ հիմնական գործառնությունները՝

1) պետական երիտասարդական քաղաքականությանն առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի քննարկում:

2) երիտասարդության աջակցությանը, նրա բազմակողմանի զարգացմանն ուղղված պետական ծրագրերի քննարկում, առաջարկությունների մշակում և ներկայացում:

3) Արցախի Հանրապետության երիտասարդության հրատապ հիմնախնդիրների լուծմանն ուղղված՝ Արցախի Հանրապետության պետական և տեղական ինքնակառա-

վարման մարմինների գործունեության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների քննարկում.

4) Արցախի Հանրապետության երիտասարդական քաղաքականության վերաբերյալ հասարակական կազմակերպությունների և այլ իրավաբանական անձանց ներկայացրած առաջարկությունների քննարկում:

IV. ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Իր իրավասությունների շրջանակներում Խորհուրդն իրավունք ունի՝

1) հայցել Արցախի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական կառույցներից, պետական և այլ կազմակերպություններից իր գործունեության համար անհրաժեշտ փաստաթղթեր (փաստաթղթերի պատճեններ) և տեղեկություններ.

2) նիստերի ժամանակ լսել Արցախի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց զեկուցումները՝ պետական երիտասարդական քաղաքականության իրականացման վերաբերյալ.

3) մասնակցել Խորհրդի իրավասություններին, երիտասարդական քաղաքականությանն առնչվող իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման աշխատանքներին, դրանց վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ.

4) Խորհրդի նիստերին հրավիրել կազմակերպությունների (անկախ կազմակերպաիրավական ձևից) և այլ մարմինների ներկայացուցիչների.

5) իրականացնել Խորհրդի գործառնությունների և խնդիրների իրագործման համար անհրաժեշտ այլ լիազորություններ:

V. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8. Խորհուրդը ստեղծվում և խորհրդի անհատական կազմը հաստատվում է Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ:

9. Խորհուրդը կազմված է նախագահից, տեղակալից, քարտուղարից և Խորհրդի անդամներից, ովքեր Խորհրդի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

10. Խորհրդի նախագահը՝

1) ղեկավարում է Խորհրդի ընթացիկ գործունեությունը և որոշում հիմնական ուղղությունները, վարում է նիստերը, նշանակում նիստի անցկացման օրը, հաստատում օրակարգը.

2) կազմակերպում է Խորհրդի աշխատանքներն ու վերահսկողություն իրականացնում Խորհրդի ընդունած որոշումների կատարման նկատմամբ.

3) ստորագրում է Խորհրդի որոշումները, ինչպես նաև Խորհրդի գործունեության հետ առնչվող մյուս փաստաթղթերը.

4) իրականացնում է սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

11. Խորհրդի նախագահի տեղակալը՝

1) Խորհրդի նախագահի բացակայության դեպքում վարում է Խորհրդի նիստերը.

2) Խորհրդի նախագահի հանձնարարությամբ անդամների հետ անց է կացնում Խորհրդի օրակարգ ընդգրկվող հարցերի նախնական քննարկումներ, համակարգում աշխատանքների ընթացքը:

12. Խորհրդի պատասխանատու քարտուղարը՝

1) Խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում կարգավորում է Խորհրդի գործունեությանն առնչվող հարցերը.

2) նախապատրաստում է Խորհրդի նիստի օրակարգը, կազմում արձանագրությունը.

3) իրականացնում է Խորհրդի աշխատանքների հետ կապված գործավարությունը.

4) Խորհրդի նախագահի, նախագահի տեղակալի բացակայության դեպքում վարում է նիստերը.

- 5) նախապատրաստում է Խորհրդի նիստերը.
- 6) նախապատրաստում է առաջարկություններ Խորհրդի պլանների կազմման ու կատարման վերաբերյալ.
- 7) մշակում և Խորհրդի քննարկմանն է ներկայացնում վերջինիս գործունեության ոլորտին վերաբերող նյութերն ու ընթացիկ տեղեկությունները և նախապատրաստում առաջարկություններ դրանց վերաբերյալ.
- 8) իրազեկում է Խորհրդի անդամներին նիստերի հրավիրման, անցկացման տեղի, ժամանակի և օրակարգի մասին նիստի հրավիրման օրվանից առնվազն հինգ օր առաջ:
13. Խորհրդի անդամը՝
- 1) Խորհրդի նիստում հանդես է գալիս Խորհրդի խնդիրներին ու գործառնություններին վերաբերող առաջարկություններով.
 - 2) քննարկվող հարցի վերաբերյալ հանդես է գալիս հատուկ կարծիքով, որը կցվում է նիստի արձանագրությանը.
 - 3) Խորհրդի անդամը Խորհրդի նիստերին մասնակցելու անհնարինության դեպքում նախապես տեղեկացնում է Խորհրդի քարտուղարին.
 - 4) Խորհրդի անդամը կարող է քննարկվող հարցերի վերաբերյալ տալ բանավոր կամ գրավոր եզրակացություններ, մշակել տարբեր հաշվետվություններ, զեկույցներ, առաջարկներ և այլ փաստաթղթեր.
 - 5) Խորհրդի անդամը Խորհրդի կազմից դուրս գալու հարցով կարող է դիմել Խորհրդի նախագահին:
14. Խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարին երկու անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ Խորհրդի անդամներից մեկի առաջարկությամբ կարող է հրավիրվել արտահերթ նիստ: Խորհրդի նիստերը համարվում են իրավագոր, եթե դրանց մասնակցում են Խորհրդի անդամների առնվազն 1/2-ը:
15. Խորհրդի որոշման համաձայն՝ առանձին հարցերի քննարկմանը կարող են հրավիրվել շահագրգիռ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ համաձայնությամբ:
16. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:
17. Խորհրդի նիստերի արձանագրությունները վավերացնում են Խորհրդի նախագահն ու պատասխանատու քարտուղարը:
18. Խորհրդի գործունեության կազմակերպչական, տեխնիկական ապահովությունն իրականացնում է Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությունը:

VI. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

19. Խորհրդի գործունեությունը դադարեցվում է Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 օգոստոսի 2018թ.

N 643-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 63 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ր ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի «Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը, գույքի կազմը և չափը հաստատելու մասին» N 63 որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2018 թվականի օգոստոսի 3-ի N 643-Ն որոշման

«Հավելված 2
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության 2004 թվականի
մարտի 16-ի N 63 որոշման

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Մ Ք
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

I. Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Վարչություններ

- 1) Անասնաբուծության և անասնաբուծության վարչություն
- 2) Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն
- 3) Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն

2. Բաժիններ

- 1) Գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության բաժին
- 2) Ագրովերամշակման զարգացման բաժին
- 3) Ջրային տնտեսության և ինժեներական մեխորացիայի բաժին
- 4) Իրավաբանական բաժին
- 5) Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
- 6) Ընդհանուր բաժին

II. Առանձնացված ստորաբաժանումներ

- 1) Գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչություն
- 2) Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության պետական տեսչություն»:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 օգոստոսի 2018թ.

N 644-Ն

ք.Ստեփանակերտ

ՄՆԱԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ, ՄՆԱԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՈՒՄԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ
ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՆԱԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄՆԱԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ,
ՈՐԱԿԻ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածների
դրույթները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ղ ղ ու մ է.**

1. Հաստատել՝

1) Մանդատերքի անվտանգության պետական ծառայության աշխատա-
կազմի անասնաբուժության տեսչության կանոնադրությունը՝ համաձայն N 1
հավելվածի.

2) Մանդատերքի անվտանգության պետական ծառայության աշխատա-
կազմի բուսասանիտարիայի տեսչության կանոնադրությունը՝ համաձայն N 2
հավելվածի.

3) Մանդատերքի անվտանգության պետական ծառայության աշխատա-
կազմի սննդամթերքի անվտանգության, որակի և օպերատիվ հսկողության
տեսչության կանոնադրությունը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՆԴԱՍԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆԱՄԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՏԵՄՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) աշխատակազմի անասնաբուժության տեսչությունը (այսուհետ՝ Տեսչություն) Ծառայության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրականացնում է վերահսկողական գործառնություններ և կիրառում պատասխանատվության միջոցներ անասնաբուժության բնագավառում՝ հանդես գալով Արցախի Հանրապետության անունից:

2. Տեսչությունը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ: Տեսչությունը գործում է իր կանոնադրության համաձայն, որը հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

3. Տեսչության լիազորությունները սահմանվում են Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության օրենքներով, Ծառայության և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով և Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4. Տեսչությունն իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է աշխատանքային ծրագրերով:

5. Տեսչությունն իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

6. Տեսչությունն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրավունք ունի Արցախի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

Տեսչությունն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ ու անհատականացման այլ միջոցներ:

II. ՏԵՄՉՈՒԹՅԱՆ ՆՊՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՂԻՐՆԵՐԸ

7. Տեսչության նպատակները և խնդիրներն են՝

1) կենդանիների, մարդկանց և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների բռնկումների կանխումը, վերացումը և այդ հիվանդություններից բնակչության պաշտպանումը.

2) օտարերկրյա պետություններից կենդանիների վարակիչ հիվանդությունների ներթափանցումից Արցախի Հանրապետության տարածքի պահպանության նկատմամբ հսկողության իրականացումը.

3) անասնաբուժասանիտարական պահանջների տեսակետից անվտանգ կենդանական ծագման մթերքի և հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների, անասնաբուժական դեղերի արտադրության նկատմամբ վերահսկողության ապահովումը.

4) կենդանիների, կենդանական ծագման մթերքի և հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների, անասնաբուժական դեղերի

փոխադրման, ներմուծման, արտահանման, իրացման և վերամշակման ընթացքի նկատմամբ վերահսկողությունը.

5) Արցախի Հանրապետության տարածքով կենդանիների, կենդանական ծագման մթերքի և հումքի, լրացակերերի, անասնաբուժական դեղերի տարանցիկ փոխադրման նկատմամբ վերահսկողությունը.

6) ներմուծվող, արտահանվող և իրացվող կենդանական ծագման մթերքի և հումքի, կերերի, կերային խառնուրդների, լրացակերերի, անասնաբուժական դեղերի անասնաբուժասանիտարական փորձաքննության նկատմամբ վերահսկողությունը.

7) շրջակա միջավայրի պաշտպանության համար իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից անասնաբուժասանիտարական պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը.

8) անասնաբուժական ոլորտում պետական հսկողության իրականացման միջազգային լավագույն փորձի, գիտական նվաճումների և նոր տեխնոլոգիաների ներդրման ապահովումը, նյութատեխնիկական բազայի ամրապնդումը (արդիակա-նացման և առաջընթացի սկզբունքը).

9) պետական հսկողության ապահովումը անասնահամաճարակային իրավիճակի, կենդանական ծագման հումքի, կերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների, լրացակերերի, անասնաբուժական դեղամիջոցների արտադրության, դրանց վերամշակման, պահպանման, տեղափոխման և իրացման գործընթացների գնահատման և կանխորոշման հիման վրա (գնահատման և կանխորոշման սկզբունքը).

10) անասնաբուժության ոլորտում պետությանը և հանրությանը սպառնացող վտանգների հայտնաբերումը, դրանց ներթափանցման և տարածման կանխումն ու վերացումը (արագ արձագանքման սկզբունքը):

III. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Տեսչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իր իրավասության սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները

1) վերահսկողություն է իրականացնում կենդանական ծագման մթերքի, հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների, անասնաբուժական դեղամիջոցների արտադրության, պահպանման, փոխադրման, իրացման (վաճառքի), կենդանիների աճեցման, պահման, տեղափոխման, իրացման, վաճառքի, սպանդի փուլերի և այդ գործընթացներում տնտեսավարողների գործունեության նկատմամբ.

2) վերահսկողություն է իրականացնում կենդանիների, կենդանական ծագման մթերքի և հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների, անասնաբուժական դեղամիջոցների արտադրության, պահպանման, տեղափոխման, իրացման (վաճառքի) փուլերում նորմատիվ իրավական ակտերով և նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջների համապատասխանության նկատմամբ.

3) իրականացնում է պետական վերահսկողություն անասնաբուժական գործունեության, Արցախի Հանրապետությունում կենդանիների վարակիչ ու ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի համալիրում անասնահամաճարակային և անասնաբուժասանիտարական կանխարգելիչ և հարկադիր միջոցառումների, գյուղատնտեսական կենդանիների հաշվառման և համարակալման, արհեստական սերմնավորման, բոնիտավորման, տոհմային գործի, տոհմանյութի արտադրության, կենդանիների սպանդի նկատմամբ, այդ գործընթացում համագործակցում է պետական մարմինների և մասնավոր կազմակերպությունների հետ.

4) պետական վերահսկողություն է իրականացնում Արցախի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում Արցախի Հանրապետության տարածք

ներմուծվող և Արցախի Հանրապետության տարածքից արտահանվող կենդանիների, կենդանական ծագման մթերքի և հումքի, կերի, լրացակերերի, մանրէական տարատեսակների, անասնաբուժական միջոցների, անասնաբուժական դեղամիջոցների անվտանգության, ինչպես նաև պահման, բաշխման, օգտագործման, իրացման (վաճառքի) (գործընթացների) նկատմամբ.

5) կազմակերպում և իրականացնում է օտարերկրյա պետություններից կենդանիների կարանտինային, հատուկ վտանգավոր ու պարտադիր ծանուցման ինֆեկցիոն հիվանդությունների՝ Արցախի Հանրապետության տարածք ներթափանցումը կանխարգելող միջոցառումներ, այդ ուղղությամբ համագործակցում պետական և շահագրգիռ մյուս մարմինների հետ.

6) կենդանիների և մարդկանց համար ընդհանուր հիվանդությունների հայտնաբերման դեպքում տեղեկացնում է պետական սանիտարահիգիենիկ վերահսկողություն իրականացնող մարմին, կազմակերպում և իրականացնում է համատեղ միջոցառումներ.

7) վերահսկողություն է իրականացնում կենդանիների կենսագործունեության համար նախատեսված ջրի անասնաբուժասանիտարական անվտանգության նկատմամբ.

8) անասնաբուժության բնագավառում գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանցից օրենքով և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և սահմանված կարգով և ժամկետներում ստանում է համապատասխան տեղեկատվություն, հաշվետվություններ, իրականացնում է վերլուծություն.

9) տալիս է կենդանիների պահվածքի, անասնապահական շինությունների շահագործման վերաբերյալ խորհրդատվություն, համաձայնություն է տալիս անասնապահական շինությունների շինարարության թույլտվությանը, վերահսկողություն է իրականացնում կենդանիների պահվածքի, անասնապահական շինությունների գոհիգիենիկ և անասնաբուժասանիտարական նորմերի պահպանման նկատմամբ.

10) իրականացնում է կենդանական ծագման մթերքի և հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների ներմուծման, արտահանման, արտադրության, պահպանման, փոխադրման, վերամշակման, իրականացման և վաճառքի գործընթացներում մակնշմանը, համապատասխանության գնահատմանը ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն.

11) պետական վերահսկողություն է իրականացնում սննդամթերքի արտադրության բնագավառում վտանգի աղբյուրի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի ներդրման և ներդրված համակարգի նկատմամբ.

12) վերահսկողություն է իրականացնում կենդանական ծագման մթերքի և հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների, անասնաբուժական դեղամիջոցների, ինչպես նաև կենդանիների դիակների ոչնչացման կամ տեխնիկական օգտահանման գործընթացների նկատմամբ.

13) ժամանակավորապես արգելում է գյուղատնտեսական կենդանիների աճի համար խթանիչների օգտագործումը, այն դեպքում, երբ առաջացել է մարդու առողջության վրա դրանց վտանգավոր ազդեցության վտանգ՝ մինչև մշակողի կամ արտադրողի կողմից դրանց անվտանգության վերաբերյալ գիտափորձական հիմնավորում ստանալը.

14) մշակում և իրականացնում է անասնաբուժական բնագավառում ծրագրեր, համագործակցում է միջազգային համապատասխան կառույցների հետ.

15) անասնաբուժական անվտանգության ապահովման նպատակով ապահովում է համագործակցություն միջազգային և տարածաշրջանային համապատասխան կազմակերպությունների հետ և փոխանակում տեղեկատվություն.

16) պետական վերահսկողություն է իրականացնում կենդանական ծագման մթերքի և հումքի, կերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների աղտոտումից պաշտպանության, կենդանիների առողջության պահպանման համար ոլորտի սանիտարական և անասնաբուժական կանոններին, հիգիենիկ նորմերին կենդանական ծագման հումքի, կերի, կերային խառնուրդի, կերային հավելման, կենդանիների, անասնաբուժական դեղամիջոցների փոխադրման համար օգտագործվող տրանսպորտային միջոցների համապատասխանության նկատմամբ.

17) հայտնաբերում է կենդանական ծագման հումքում, կերերում, կերային հավելումներում, կերային խառնուրդներում, բուսական անասնաբուժական դեղամիջոցներ, աղտոտիչներ, պեստիցիդներ և հսկողություն է իրականացնում դրանց մնացորդային քանակությունների նկատմամբ.

18) կենդանիների, կենդանական ծագման հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների և կերային հավելումների, անասնաբուժական դեղամիջոցների արտադրության, պահպանման, իրացման (վաճառքի) գործընթացներում իրականացնում է մշտադիտարկում, ուսումնասիրություն և իրավիճակի վերլուծություն.

19) կազմակերպում է սերունդների զննումներ և իրականացնում գործընթացների վերահսկում.

20) իրականացնում է անասնաբուժության բնագավառը կարգավորող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի նախապատրաստում.

21) իրականացնում է Արցախի Հանրապետության կառավարությունից, նախարարություններից և այլ մարմիններից ստացված օրենքների, իրավական այլ ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքների տրամադրում.

22) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

IV. ՏԵՄՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

9. Տեսչությունը կառավարում է Ծառայության պետը: Տեսչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Տեսչության պետը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Տեսչության պետն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության օրենքներով, նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով և Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

10. Տեսչության պետը պատասխանատու է անասնաբուժության բնագավառում վերահսկողական գործառույթների իրականացման և պատասխանատվության միջոցների կիրառման, ինչպես նաև դրանց օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության համար:

11. Տեսչության պետը հաշվետու է Ծառայության պետին, իսկ քաղաքացիական ծառայության մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև Ծառայության աշխատակազմի ղեկավարին:

12. Տեսչության պետը՝

1) կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Տեսչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է Տեսչության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

2) կատարում է Ծառայության կողմից վարվող քաղաքականության մասով Ծառայության պետի, իսկ քաղաքացիական ծառայության ղեկավարման և կազմակերպման մասով՝ աշխատակազմի ղեկավարի հանձնարարականները.

3) ապահովում է Ծառայության պետի հրամանների և ցուցումների, հանձնարարականների ու առաջադրանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում Ծառայության պետին.

4) ներկայացնում է առաջարկություններ Ծառայության պետին Տեսչության առջև դրված խնդիրների ու գործառնությունների իրականացման համար օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառի, նպատակների ու խնդիրների վերաբերյալ:

5) իր իրավասության սահմաններում Տեսչության աշխատողներին տալիս է համապատասխան հանձնարարականներ և ցուցումներ:

6) իր իրավասության սահմաններում Ծառայության աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ Տեսչության աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ:

7) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ:

8) Ծառայության պետին ներկայացնում է առաջարկություններ Տեսչության կառուցվածքի և աշխատողների թվի, ինչպես նաև Տեսչության խորհրդակցական մարմիններ ստեղծելու վերաբերյալ:

9) Ծառայության պետին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն Տեսչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին:

10) Ծառայության և սույն կանոնադրության համապատասխան սահմանում է Տեսչության աշխատողների իրավասությունները:

11) լսում է Տեսչության աշխատողների գործունեության մասին հաշվետվությունները, քննարկում դրանց գործունեության ստուգման արդյունքները:

12) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ իր իրավասության սահմաններում և օրենքով նախատեսված դեպքերում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

13) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև Տեսչության առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

14) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև իր պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

13. Տեսչության պետի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման ժամանակավոր անհնարինության հարցը կարգավորվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին համապատասխան:

V. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

14. Օրենքով, այլ իրավական ակտերով, Ծառայության և սույն կանոնադրությամբ Տեսչությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովում է Ծառայության աշխատակազմը:

15. Տեսչության աշխատողները քաղաքացիական ծառայողներ են:

16. Տեսչության վերակազմակերպման ու նրա գործունեության դադարեցման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով և այլ իրավական ակտերով:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՆԴԱՍԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) աշխատակազմի բուսասանիտարիայի տեսչությունը (այսուհետ՝ Տեսչություն) Ծառայության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրականացնում է Ծառայությանը վերապահված բուսասանիտարիայի բնագավառում վերահսկողական գործառնություններ և կիրառում պատասխանատվության միջոցներ՝ հանդես գալով Արցախի Հանրապետության անունից:

2. Տեսչությունը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ: Տեսչությունը գործում է իր կանոնադրության համաձայն, որը հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

3. Տեսչության լիազորությունները սահմանվում են Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության օրենքներով, Ծառայության և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով և Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4. Տեսչությունն իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է աշխատանքային ծրագրերով:

5. Տեսչությունն իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

6. Տեսչությունն օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում իրավունք ունի Արցախի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

Տեսչությունն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով իր՝ հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ ու այլ անհատականացման միջոցներ:

II. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Տեսչության նպատակները և խնդիրներն են՝

1) բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների ներմուծման, արտահանման, վերաարտահանման և տարանցիկ փոխադրման գործառնությունների իրականացման ընթացքում բուսասանիտարական կանոնների և նորմերի պահպանման ապահովումը.

2) ագրարային կանոններով սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության ապահովումը.

3) բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորող առարկաների արտադրության և վերամշակման ընթացքում, ինչպես նաև Արցախի Հանրապետության տարածքում գործող իրացման կետերում բուսասանիտարական կանոնների և նորմերի պահպանումը և դրանց պահպանման նկատմամբ վերահսկողությունը.

4) ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ հողերի մշակության, պարարտանյութերի օգտագործման, բույսերի վնասակար օրգանիզմների դեմ իրականացվող պայքարի, թունանյութերի, սերմանյութերի, տնկանյութերի

(արմատակալների) արտադրության, ներմուծման, փոխադրման, պահպանման, իրացման, դրանց ցանքային պիտանիության և որակի ստուգման, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողերի բերրիության և օգտակար այլ հատկությունների պահպանության և վերականգնման, դրանց արդյունավետ օգտագործման, մոնիթորինգի իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացումը.

5) բուսասանիտարիայի ոլորտում պետությանը և հանրությանը սպառնացող վտանգների հայտնաբերումը, դրանց ներթափանցման և տարածման կանխումն ու վերացումը (արագ արձագանքման սկզբունքը).

6) պետական վերահսկողության ապահովումը բուսասանիտարական իրավիճակի, բույսերի, բույսերի պաշտպանության միջոցների, պարարտանյութերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների արտադրության, դրանց վերամշակման, պահպանման, տեղափոխման և իրացման գործընթացների գնահատման և կանխորոշման հիման վրա (գնահատման և կանխորոշման սկզբունքը).

7) բուսասանիտարիայի ոլորտում պետական վերահսկողության իրականացման միջազգային լավագույն փորձի, գիտական նվաճումների և նոր տեխնոլոգիաների ներդրման ապահովումը, նյութատեխնիկական բազայի ամրապնդումը (արդիականացման և առաջընթացի սկզբունք):

III. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Տեսչությունն իր առջև դրված խնդիրների և նպատակների իրականացման համար իր իրավասությունների սահմաններում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) վերահսկողություն է իրականացնում ներմուծվող, տարանցիկ փոխադրվող բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների՝ արտահանող երկրի կողմից տրված բուսասանիտարական փաստաթղթերի համապատասխանության նկատմամբ.

2) իր լիազորությունների սահմաններում վերահսկողություն է իրականացնում պետսիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման, արտահանման, պահպանման, փոխադրման, իրացման, օգտագործման գործընթացների, ինչպես նաև բուսասանիտարական կանոնների և նորմերի պահանջների կատարման նկատմամբ.

3) Արցախի Հանրապետության տարածքում բույսերի վնասակար օրգանիզմներ հայտնաբերելու և դրանց հետագա տարածումը կանխարգելելու նպատակով պարբերաբար անցկացնում է մոնիթորինգ, վերահսկողություն է իրականացնում այլ ծառայությունների կողմից կատարվող վնասակար օրգանիզմների մոնիթորինգի անցկացման նկատմամբ, կատարում է բուսասանիտարական վտանգի վերլուծություն, արդյունքների հիման վրա որոշում կարանտին վնասակար օրգանիզմներից ազատ (զերծ) գոտիների սահմանները և ներկայացնում Ծառայության պետի հաստատմանը.

4) վերլուծում է գյուղատնտեսական, գեղազարդային մշակաբույսերի բուսասանիտարական վիճակը, անհրաժեշտության դեպքում, իրազեկում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց վնասակար օրգանիզմների հայտնաբերման, կանխարգելման, տարածման, դրանց դեմ պայքարի համալիր միջոցառումների կիրառման մասին.

5) բուսասանիտարական վտանգի վերլուծության հիման վրա նախապատրաստում է Արցախի Հանրապետության տարածքում բացակայող կամ սահմանափակ տարածում ունեցող կարանտին և կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմների ցանկը և այն ներկայացնում Ծառայության պետի հաստատմանը.

6) կանխարգելիչ միջոցառումներ է ձեռնարկում Արցախի Հանրապետությունում պետական գրանցում չստացած, օգտագործումից հանված, ժամկետանց և արգելված, բնակչության առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր պետսիցիդների

և ագրոքիմիկատների իրացման, օգտագործման և ագրարային կանոնների խախտմամբ կատարվող պայքարի աշխատանքների իրականացման ուղղությամբ.

7) վերահսկողություն է իրականացնում իրավաբանական և ֆիզիկական անձանց հողային, արտադրական, առևտրային, պահեստային տարածքներում և կարգավորվող առարկաներում բույսերի պաշտպանությանն ուղղված միջոցառումների անցկացման նկատմամբ.

8) ֆիզիկական և իրավաբանական անձանց տալիս է բույսերի, բուսական արտադրանքի, կարգավորվող առարկաների, պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման թույլտվություն և բույսերի, բուսական արտադրանքի ու կարգավորվող առարկաների ներմուծման, արտահանման, վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրեր.

9) վերահսկողություն է իրականացնում գյուղատնտեսական հողերից, ռոզման ջրից, բույսերից, բուսական արտադրանքից և կարգավորվող առարկաներից փորձաքննության նպատակով կատարվող նմուշառման, հողերի մշակության, սերմանյութերի և տնկանյութերի արտադրության, ներմուծման, փոխադրման, պահպանման, իրացման, օգտագործման գործընթացներում որակի բուսասանիտարական ստուգման և վնասակար օրգանիզմների դեմ տարվող պայքարի միջոցառումների անցկացման նկատմամբ.

10) իրականացնում է բուսասանիտարիայի բնագավառը կարգավորող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի նախապատրաստում.

11) իրականացնում է Արցախի Հանրապետության կառավարությունից, նախարարություններից և այլ մարմիններից ստացված օրենքների, իրավական այլ ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքների տրամադրում.

12) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև Ծառայության և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

IV. ՏԵՄՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

9. Տեսչությունը կառավարում է Ծառայության պետը: Տեսչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Տեսչության պետը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Տեսչության պետն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության օրենքներով, նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով և Ացախի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

10. Տեսչության պետը պատասխանատու է բուսասանիտարիայի բնագավառում վերահսկողական գործառույթների իրականացման և պատասխանատվության միջոցների կիրառման, ինչպես նաև դրանց օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության համար:

11. Տեսչության պետը հաշվետու է Ծառայության պետին, իսկ քաղաքացիական ծառայության մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև Ծառայության աշխատակազմի ղեկավարին:

12. Տեսչության պետը՝

1) կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Տեսչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է Տեսչության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

2) կատարում է Ծառայության կողմից վարվող քաղաքականության մասով՝ Ծառայության պետի, իսկ քաղաքացիական ծառայության ղեկավարման և կազմակերպման մասով՝ աշխատակազմի ղեկավարի հանձնարարականները.

3) ապահովում է Ծառայության պետի հրամանների և ցուցումների, հանձնարարականների ու առաջադրանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում է Ծառայության պետին.

4) ներկայացնում է առաջարկություններ Ծառայության պետին Տեսչության առջև դրված խնդիրների ու գործառնությունների իրականացման համար օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառի, նպատակների ու խնդիրների վերաբերյալ:

5) իր իրավասության սահմաններում Տեսչության աշխատողներին տալիս է համապատասխան հանձնարարականներ և ցուցումներ:

6) իր իրավասության սահմաններում Ծառայության աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ Տեսչության աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ:

7) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ:

8) Ծառայության պետին ներկայացնում է առաջարկություններ Տեսչության կառուցվածքի և աշխատողների թվի, ինչպես նաև Տեսչության խորհրդակցական մարմիններ ստեղծելու վերաբերյալ:

9) Ծառայության պետին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն Տեսչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին:

10) Ծառայության և սույն կանոնադրության համապատասխան սահմանում է Տեսչության աշխատողների իրավասությունները:

11) լսում է Տեսչության աշխատողների գործունեության մասին հաշվետվությունները, քննարկում դրանց գործունեության ստուգման արդյունքները:

12) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ իր իրավասության սահմաններում և օրենքով նախատեսված դեպքերում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

13) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև Տեսչության առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու համար:

14) իրականացնում է օրենքով, իր պաշտոնի անձնագրով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

13. Տեսչության պետի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման ժամանակավոր անհնարինության հարցը կարգավորվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին համապատասխան:

V. ՏԵՏՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

14. Օրենքով, այլ իրավական ակտերով, Ծառայության և սույն կանոնադրությամբ Տեսչությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովում է Ծառայության աշխատակազմը:

15. Տեսչության աշխատողները քաղաքացիական ծառայողներ են:

16. Տեսչության վերակազմակերպման ու նրա գործունեության դադարեցման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով և այլ իրավական ակտերով:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՆԴԱՍԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԱՆԴԱՍԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ՈՐԱԿԻ
ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) աշխատակազմի սննդամթերքի անվտանգության, որակի և օպերատիվ հսկողության տեսչությունը (այսուհետ՝ Տեսչություն) Ծառայության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ Ծառայությանը վերապահված սննդամթերքի անվտանգության բնագավառում իրականացնում է վերահսկողական գործառնություններ և կիրառում պատասխանատվության միջոցներ՝ հանդես գալով Արցախի Հանրապետության անունից:

2. Տեսչությունը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ: Տեսչությունը գործում է իր կանոնադրության համաձայն, որը հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

3. Տեսչության լիազորությունները սահմանվում են Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության օրենքներով, Ծառայության և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով և Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4. Տեսչությունն իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է աշխատանքային ծրագրերով:

5. Տեսչությունն իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

6. Տեսչությունն օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում իրավունք ունի Արցախի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

Տեսչությունն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ ու անհատականացման այլ միջոցներ:

II. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Տեսչության նպատակները և խնդիրներն են՝

1) սպառողների առողջության համար սննդամթերքի հնարավոր վնասակար ազդեցությունից պաշտպանության նպատակով սննդի շղթան (արտադրությունից մինչև սպառումը) որպես մեկ միասնական ամբողջություն դիտարկելը (սպառողների շահերի պաշտպանության սկզբունք):

2) սննդամթերքի անվտանգության համակարգի գործունեության վերաբերյալ հասարակությանը հստակ, ամբողջական և հավաստի տեղեկատվության տրամադրումը, ներառյալ՝ սպառողին խորհրդատվության տրամադրումը (թափանցիկության սկզբունք):

3) սննդամթերքի անվտանգության ոլորտում պետական վերահսկողության ապահովումը հետազոտությունների կիրառմամբ (հետազոտությունների սկզբունք):

4) սննդամթերքի անվտանգության գիտականորեն հիմնավորված ռիսկերի գնահատման, խորհրդատվության տրամադրման, ռիսկերի կառավարման ընթացքում

դրանց գիտականորեն հիմնավորված գնահատականների հիման վրա որոշումների ընդունումը (ռիսկերի վերլուծության սկզբունք)։

5) սննդամթերքի անվտանգության ապահովման համար սննդի շղթայի բոլոր փուլերում գործառնություններ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ (ներառյալ՝ անասնակեր և առաջնային գյուղատնտեսական մթերք արտադրողները, վերամշակողները, իրացնողները) օրենքով սահմանված կարգով պատասխանատվության միջոցների կիրառումը (տնտեսավարող սուբյեկտների պատասխանատվության սկզբունք)։

6) սպառողների առողջությանն սպառնացող վտանգի հավանականության առկայության դեպքում, երբ վտանգի լիարժեք գնահատման համար գիտական հիմքերը բավարար չեն կամ անորոշ են, ռիսկերի կառավարման նախագգուշական միջոցների կիրառումը (նախագգուշացման սկզբունք)։

7) սննդամթերքի անվտանգության ոլորտում պետական վերահսկողության իրականացման միջազգային լավագույն փորձի, գիտական նվաճումների և նոր տեխնոլոգիաների ներդրման ապահովումը, նյութատեխնիկական բազայի ամրապնդումը (արդիականացման և առաջընթացի սկզբունք)։

8) պետական հսկողության ապահովումը սննդամթերքի անվտանգության, սննդամթերքի արտադրության, դրանց վերամշակման, պահպանման, տեղափոխման և իրացման գործընթացների գնահատման և կանխորոշման հիման վրա (գնահատման և կանխորոշման սկզբունք)։

9) սննդամթերքի անվտանգության ոլորտում պետությանը և հանրությանը սպառնացող վտանգների հայտնաբերում, դրանց ներթափանցման և տարածման կանխում ու վերացում (արձագանքման սկզբունք)։

III. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Տեսչությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

1) վերահսկողություն է իրականացնում սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի, սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների, կենդանական ծագման հումքի, բուսական արտադրանքի համար նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջների համապատասխանության նկատմամբ։

2) վերահսկողություն է իրականացնում սննդամթերքում, կենդանական ծագման հումքում, բուսական արտադրանքում աղտոտիչների և դրանց մնացորդային քանակությունների նկատմամբ։

3) վերահսկում է Արցախի Հանրապետության տարածքով սննդամթերքի ներմուծման, արտահանման, տարանցիկ փոխադրման, ինչպես նաև ներքին փոխադրումների, արտադրության, դրանց վերամշակման, պահպանման, իրացման գործընթացները։

4) վերահսկողություն է իրականացնում սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի, սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների, կենդանական ծագման հումքի, բուսական արտադրանքի ներմուծման, արտադրության, ինչպես նաև իրացման փուլում գենետիկորեն փոփոխված օրգանիզմների (ԳՓՕ-ի) նկատմամբ։

5) աջակցում է սննդամթերքի արտադրության բնագավառում վտանգի աղբյուրի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի ներդրմանը և վերահսկողություն է իրականացնում ներդրված համակարգի նկատմամբ։

6) վերահսկողություն է իրականացնում վտանգավոր սննդամթերքի, վտանգավոր սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների, սննդամթերքի հետ շփվող վտանգավոր նյութերի, վտանգավոր կենդանական ծագման հումքի, վտանգավոր բուսական արտադրանքի ոչնչացման կամ տեխնիկական օգտահանման գործընթացների նկատմամբ։

7) սննդամթերքի անվտանգության և որակի, համապատասխանության գնահատման բնագավառներում գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանա-

կան անձանցից օրենքով և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստանում է համապատասխան տեղեկատվություն, հաշվետվություններ, սահմանված կարգով և ժամկետներում իրականացնում վերլուծություն, ստուգում արձանագրված տվյալների հավաստիությունը.

8) վերահսկողություն է իրականացնում սննդամթերքի անվտանգությունը և լաբորատոր հետազոտությունները հավաստող ուղեկցող փաստաթղթեր տալու, հաշվառելու և օգտագործելու գործընթացների նկատմամբ.

9) վերահսկողություն է իրականացնում սննդի արտադրության, պահպանման, տեղափոխման, վերամշակման, իրացման (արտադրության և շրջանառության փուլեր) բոլոր փուլերում սննդամթերքի անվտանգությանն առնչվող նորմատիվ փաստաթղթերով սահմանված պարտադիր պահանջների պահպանման նկատմամբ.

10) չափագիտական վերահսկողություն է իրականացնում փաթեթավորված, չափաձրարված սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի, սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների, կենդանական ծագման հումքի, բուսական արտադրանքի նկատմամբ.

11) վերահսկողություն է իրականացնում սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի, սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների, կենդանական ծագման հումքի, բուսական արտադրանքի ներմուծման, արտահանման, արտադրության, պահպանման, փոխադրման, վերամշակման և իրացման գործընթացներում մակնշմանը, համապատասխանության գնահատմանը ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ.

12) վերահսկողություն է իրականացնում սննդամթերքի փոխադրման համար օգտագործվող տրանսպորտային միջոցների՝ որակական հատկությունների պահպանության, փաթեթավորման անվնաս պահպանման և աղտոտումից պաշտպանման՝ սննդամթերքի անվտանգության ապահովման ոլորտի նորմատիվ իրավական ակտերով սահմանված սանիտարական կանոններին և հիգիենիկ նորմերին համապատասխանության նկատմամբ.

13) վերահսկում է սննդամթերքի արտադրության և շրջանառության փուլերի համար նախատեսված տարածքների կառուցման, կահավորման, վերանորոգման՝ նորմատիվ իրավական ակտերով սահմանված տվյալ սննդամթերքին ներկայացվող պահանջներին համապատասխանությունը.

14) ամփոփում և վերլուծում է սույն կանոնադրությամբ նախատեսված ստուգումների ժամանակ արձանագրված արդյունքները.

15) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ իր իրավասության սահմաններում իրականացնում է վարչական վարույթ.

16) մշակում է սննդամթերքի անվտանգության և որակի հսկողության ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծեր.

17) իրականացնում է Արցախի Հանրապետության կառավարությունից, նախարարություններից և այլ մարմիններից ստացված օրենքների, իրավական այլ ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքների տրամադրում.

18) սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի, սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների, կենդանական ծագման հումքի, բուսական արտադրանքի անվտանգության ապահովման նպատակով համագործակցում է միջազգային և տարածաշրջանային համապատասխան կազմակերպությունների հետ և փոխանակում տեղեկատվություն.

19) իրականացնում է օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

IV. ՏԵՄՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

9. Տեսչությունը կառավարում է Ծառայության պետը: Տեսչության ամբիջական ղեկավարումն իրականացնում է Տեսչության պետը, որը պաշտոնի նշանակվում և

պաշտոնից ազատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Տեսչության պետն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության օրենքներով, նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով և Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

10. Տեսչության պետը պատասխանատու է սննդամթերքի անվտանգության և որակի հսկողության բնագավառում վերահսկողական գործառնությունների իրականացման և պատասխանատվության միջոցների կիրառման, ինչպես նաև դրանց օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության համար:

11. Տեսչության պետը հաշվետու է Ծառայության պետին, իսկ քաղաքացիական ծառայության մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև Ծառայության աշխատակազմի ղեկավարին:

12. Տեսչության պետը՝

1) կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Տեսչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է Տեսչության առջև դրված խնդիրների ու գործառնությունների իրականացման համար:

2) կատարում է Ծառայության կողմից վարվող քաղաքականության մասով՝ Ծառայության պետի, իսկ քաղաքացիական ծառայության ղեկավարման և կազմակերպման մասով՝ աշխատակազմի ղեկավարի հանձնարարականները:

3) ապահովում է Ծառայության պետի հրամանների և ցուցումների, հանձնարարականների և առաջադրանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացում է Ծառայության պետին:

4) ներկայացնում է առաջարկություններ Ծառայության պետին Տեսչության առջև դրված խնդիրների ու գործառնությունների իրականացման համար օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառի, նպատակների ու խնդիրների վերաբերյալ:

5) իր իրավասության սահմաններում Տեսչության աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ:

6) իր իրավասության սահմաններում Ծառայության աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ Տեսչության աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ:

7) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ:

8) Ծառայության պետին ներկայացնում է առաջարկություններ Տեսչության կառուցվածքի և աշխատողների թվի, ինչպես նաև Տեսչության խորհրդակցական մարմիններ ստեղծելու վերաբերյալ:

9) Ծառայության պետին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն Տեսչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին:

10) Ծառայության և սույն կանոնադրության համապատասխան սահմանում է Տեսչության աշխատողների իրավասությունները:

11) լսում է տեսչության աշխատողների գործունեության մասին հաշվետվությունները, քննարկում դրանց գործունեության ստուգման արդյունքները:

12) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ իր իրավասության սահմաններում և օրենքով նախատեսված դեպքերում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

13) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև Տեսչության առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

14) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

13. Տեսչության պետի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման ժամանակավոր անհնարինության հարցը կարգավորվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

V. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

14. Օրենքով, այլ իրավական ակտերով, Ծառայության և սույն կանոնադրությամբ Տեսչությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովում է Ծառայության աշխատակազմը:

15. Տեսչության աշխատողները քաղաքացիական ծառայողներ են:

16. Տեսչության վերակազմակերպման ու նրա գործունեության դադարեցման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով և այլ իրավական ակտերով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 օգոստոսի 2018թ.

N 646-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N 112-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ր ք շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 21-ի «Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմի, նախարարությունների և տարածքային կառավարման մարմինների աշխատողների առավելագույն թվաքանակը և ղեկավարների տեղակալների թվաքանակը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 29-ի N 34-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 112-Ն որոշմամբ սահմանված հավելվածի աղյուսակում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 13-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	13.	Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն	340	3	».
---	-----	---	-----	---	----

2) «Ընդամենը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	Ընդամենը	1898,5	38	3	»:
---	----------	--------	----	---	----

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ № 3-Ն

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի ԹԻՎ 02-Ն
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

2018 թվականի հուլիսի 31-ին Ստեփանակերտ քաղաքում, քննարկելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի 2010 թվականի հունիսի 22-ի թիվ 02-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու հարցը և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասը, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետը՝ Արցախի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի 2010 թվականի հունիսի 22-ի «Դատավորի վարքագծի կանոնները սահմանելու մասին» թիվ 02-Ն որոշումը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

**31 հուլիսի 2018թ.
ք. Ստեփանակերտ**